№ 106 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 19 **1898** ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 19 № 106

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹՒԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը 1 բուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցն. անկիւն)։ Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ, редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի հայոց մամուլը. Անխնայ մերկացում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր ծրագիր. Գիւղական յաւերից մէկը. Նամակ Աշտարակից. Նամակ Զանգեզուրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պատերազմ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վիէննայի Մխիթարեանների տպագրական գործունէութիւնը.

Կ. ՊՕԼՍԻ ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ

Կ. Պոլսից մեզ հաղորդած այսօրվայ լուրը՝ «Արևելք» լրագրի նորից հրատարակվելու մասին, առիթ է տալիս մի քանի խօսք ասելու այն ընկած և հիւծված հասարակական օրգանի մասին, որ կոչվում է Կ. Պոլսի հայոց մամուլ։

Կ. Պոլսի հայոց մամուլը, չը նայած իր երկարատև անցեալին և աւելի անդրանիկ հասակին, քան ռուսահայերի մամուլն ունի, ընդհանրապէս միշտ խեղճ բան է եղել։ Նա անցեալում էլ նախանձելի չէր, բայց հայկական վերջին շարժումներից յետոյ՝ Թիւրքաց կառավարութեան բռնած դիրքի շնորհիւ, այդ մամուլը կատարելապէս ընկաւ։ Երբ «Հայրենիքի» նման կենդանի լրագիրը անհետացրվեց, «Արևելքը» խափանվեց, և փոքր ի շատէ շնորքով և մաքուր հրապարակախօսները և գրական գործիչները Կ. Պոլսից հեռացան, ասպարէզը մնաց վարձկան, ապականող և վնասակար մարդկանց, որոնց մի-մի ներկայացուցիչ պէտք է համարել Բիւզանդ Քէչեանին իր «Բիւզանդիոնով» և Վահան վարդապետներին իրանց «Լոյս» և այլ այդպիսի փքուն անուններ կրող, բայց անպայման զզուելի թերթերով...

«Մասիս» լրագրի երևան գալը, որ, եթէ չենք սխալվում, խմբեց իր շուրջը մի քանի, փոքր ի շատէ օրինաւոր գրողներ,—պէտք է համարել առաջին ծիլը՝ գրական այն աւերակների մէջ, որոնք վերջին տարիները կազմված էին Կ. Պոլսի հայոց մամուլի գոյութեան վայրերում։ Մի երկրորդ ծիլ պէտք է համարել «Արևելք» լրագրի երևան գալը, եթէ մենք չենք սխալվում ենթադրելով, որ այդ օրգանը հանդէս է գալիս ոչ թէ վաճառվող թերթերի թիւը աւելացնելու, այլ մի մաքուր խօսք ասելու և մի ազնիւ գործի ծառայելու համար։ Եւ երբէք գուցէ մաքուր և ազնիւ խօսքը այնքան հարկաւոր չէ եղել Կ. Պոլսում, որքան այժմ, երբ Թիւրքահայ հասարակութեան միտքը կատարեալ անկումն է ներկայացնում, և ասպարէզը մնացել է խարդախ և շողոքորթ գրական ոչնչութիւններին...

Ամբողջ Թիւրքաց Հայաստանը չունի և ոչ մի հատ լրագիր. նա Կ. Պոլսից է սպասում Լոյս։ Կ. Պոլիսը, իբրև այդ Լոյսի կենտրոն, մամուլից դուրս չունի կենդանի և գաղափարին ծառայող գրականութիւն, այլ ամբողջ գրականութիւնը ամփոփված է պարբերական մամուլի մէջ, որի շուրջը և խմբվում են Թիւրքաց մայրաքաղաքում նստած գրողները։ Եւ հէնց այդ պատճառով էլ Կ. Պոլսի հայոց մամուլի զարգացումը և մաքուր օրգանների երևան գալը՝ կենսական խնդիր է Թիւրքահայերի գրական հասարակութեան բոլոր խաւերի համար, որոնք միմիայն այդ աղբիւրից կարող են մտաւոր սնունդ ստանալ և այդտեղ գտնել ընթերցանութեան դէթ համեստ նիւթ։

ԱՆԽՆԱՅ ՄԵՐԿԱՅՈՒՄ

Ցաւախ պատահում է տեսնել, որ հասարակական կարծիքը պախարակում է այն գործիչին կամ պաշտօնեային, որը լինելով անդամ որ և է մի հասարակական կամ պաշտօնական հիմնարկութեան, թոյլ է տալիս իրան, հակառակ իր պաշտօնակիցների կարծիքին, մերկացնել հիմնարկութեան պակասութիւնները, քննադատել նրա գործունէութիւնը և յարձակվել նրա ուղղութեան վրա։ Առօրեայ բարոյագիտութիւնը ահա ինչ վճիռ է արձակում այդպիսի մարդկանց մասին։ «Եթէ քեզ դուր չէ գալիս հիմնարկութիւնը, հրաժարվիր պաշտօնից, քանի որ այդ հիմնարկութեան վարիչների մեծամասնութիւնը համերաշխ չէ քեզ հետ»։

Իրաւացի է արդեօք այդ դատողութիւնը։ Այդպիսի մի հարց նորերս արծարծվեց Անգլիայում և արծարծողն եղաւ անգլիական ժողովրդական լուսաւորութեան մինիստր Զօն Գօրստ։ Երբ անգլիական պարլամենտը, իր վերջին նիստերից մէկում, քննում էր կաբինէտի կողմից առաջարկված ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան նախահաշիւը, սըր Զօն Գօրստ մի համարձակ ճառ խօսեց, որով սաստիկ քննադատեց ժողովրդական կրթութեան այժմեան սիստեմը. ապա յարձակվելով կառավարութեան առաջարկած օրինագծի դէմ, որի նպատակն է նիւթական օժանդակութիւն տալ կղերական կամաւոր դպրոցներին, նա պախարակեց կաբինէտի գործունէութիւնը ընդհանրապէս՝ ժողովրդական լուսաւորութեան գործի ասպարէզում։

Անգլիան՝ Վալլիսի հետ միասին, ամեն տարի 12 միլիոն ֆունտ ստերլինգ է ծախսում ժողովրդական կրթութեան համար. բայց չը նայելով այդ անաղին գումարին, ժողովրդական կրթութիւնը այնպիսի զարգացման չէ հասել Անգլիայում, ինչպէս պէտք է լինէր։ Շատ տեղերում նա նոյն իսկ անհնախանձելի վիճակի մէջ է գտնվում, իսկ այն կղերական դպրոցները, որոնց կառավարութիւնը կամենում է օժանդակութիւն տալ, միանգամայն տխուր պատկեր են ներկայացնում։ Երբ կաբինէտի միւս մինիստրները և առհասարակ այժմեան մինիստրութեան կուսակիցները, որոնք չէին սպասում այդպիսի մի մերկացում կաբինէտի մի անդամի կողմից, սկսեցին բողոքել և առարկութիւններ անել, Զօն Գօրստ ուղղակի ասաց նրանց երեսին. «Այս բոլորը, յարգելի պարոններ, սոսկ փաստեր են, որոնք ես կարող էի թաղցնել, բայց, դժբախտաբար, չեմ կարող աղաւաղել»։ Եւ վիճակագրական տեղեկութիւններով ու պաշտօնական անհերքելի զեկուցագրերով զինված, մինիստր Գօրստ սկսեց մի առ մի ապացուցանել իր ասածը։

Նրա այդ վարմունքը անաղին յուզմունք առաջ բերեց տօրիների կուսակցութեան և մամուլի մէջ. Գօրստի յարձակումը, ասում են նրանք, այն կաբինէտի դէմ, որի անդամ է ինքն, հակառակ է էտիկայի և անաղնութիւն է. եթէ նա չէ համակրում իր պաշտօնակիցների գործունէութեանը, նա պարտաւոր է հրաժարվել իր պաշտօնից։ Յարձակվել այն օրինագծի դէմ, որ առաջարկում է կաբինէտը, լինելով այդ կաբինէտի անդամ—այդ բոլորովին հակառակ է ընդունված բարոյականութեան և չէ կարող արդարանալ ոչ և է պատճառաբանութեամբ։ Սակայն մինիստր Զօն Գօրստ յայտնեց, որ ամենևին մտադիր չէ հրաժարվել իր պօրտֆէլից և իր բարոյական պարտաւորութիւնն է համարում, իբրև ժողովրդական լուսաւորութեան մինիստր, յարձակվել այն սիստէմի վրա, որ նա վնասակար է համարում իր հայրենիքի համար։ Եւ այդ դէպքում տօրի մինիստրութեան անդամն արտայայտած հայեացքին ջերմ պաշտպան հանդիսացան ազատամիտ կուսակցութիւնը և մամուլը. վերջինս միաբերան այն կարծիքն է յայտնում, որ մինիստրը պարտաւոր է ծառայել միայն ժողովրդական լուսաւորութեան շահերին և այդ շահերի առաջ ուրիշ ոչ և է նկատում պէտք է չունենայ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Մայրաքաղաքի լրագիրների մէջ գտնում ենք տեղեկութիւններ այն նոր ծրագրի մասին, որ մշակել է երկրագործութեան մինիստրութիւնը՝ գիւղատնտեսական կատարելագործութիւնները իրականացնելու համար։ Այդ ծրագրով մինիստրութիւնը պիտի քննի երկրի ամենաստիպները և նրանցից լաւերին տայ յայտնի պարգևներ, քով դիտել է թէ ինչպիսի գուրգուրանքով են վերաբերվում Մխիթարեան հայրերը դէպի իրանց տպարանը և ինչ անդուլ ու անխոնջ աշխատանք են գրած դնում նրա վրա, մտցնելով նրա մէջ ժամանակի պահանջած բոլոր բարեփոխութիւնները, և արուեստի վերջին կատարելագործութիւնները, որոնց շնորհիւ այդ տպարանը ոչ թէ միայն հայոց մէջ առաջինն է և ամենակատարեալը, այլ նոյն իսկ Եւրօպայում էլ նշանաւորներից մէկը։

Վիէննայի միաբանութեան տպագրական գործունէութիւնը սկսված է նախ Տրիեստում, երբ Մխիթար աբբահօր մահվանից յետոյ 21 քահանայ ս. Ղազարի վանքից հեռանալով՝ եկան հաստատվեցան այդտեղ։ Աւստրիայի այն ժամանակի միապետը՝ Մարիա Թերեզա կայսրուհին, սիրով ընդունելով այդ պանդուխտ և չքաւոր հայ վարդապետներին, 1775-ի հրովարտակով իրաւունք տուեց նրանց արևելեան և արևմտեան լեզուների մի տպարան հիմնել Տրիեստում, որը և նոյն տարին աջողեցան հաստատել։ Միջանկեալ կերպով պատմենք այստեղ թէ շատ նշանաւոր է մեծ կայսրուհու այդ՝ հայոց վերաբերեալ և 53 յօդուածներից բաղկացած հրովարտակը, որով մեծամեծ արտօնութիւններ էր շնորհում թէ Մխիթարեաններին և թէ առհասարակ հայ գաղթականութեան. իրաւունք էր տալիս յատուկ ազգային գլուխ ունենալ և բոլոր արևելեան միւս ազգերից եկած գաղթականներին էլ ենթարկում էր հայոց ազգապետին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

«Մշակը» հաղորդեց արդէն թէ այս տարի Վիէննայում բացվելի ցուցահանդէսը, որ կազմակերպվում է ի պատիւ Աւստրիայի կայսր Ֆրանց Յովսէփի գահակալութեան 50-ամեայ յոբելեանի,—պիտի ունենայ մասամբ և իր հայկական բաժինը։ Վիէննայում այս երկրորդ անգամն է, որ Մխիթարեանները մասնակցում են այդպիսի հանդէսին։ Առաջին անգամ 1892 թվին էր, որի մասին այն ժամանակ առիթ ունեցանք Վիէննայից գրել «Մշակին» մանրամասն։ Ուրախ ենք, որ նոյն միաբանութիւնը այս անգամ ևս իրան յատուկ հմտութեամբ պատրաստել է այդ բաժինը, որ ունի միանգամայն և գեղարուեստական արժանիք։

Մեր առջև դրված է այս առիթով յարգելի միաբանութեան կողմից լոյս ընծայված մի գերմաներէն հրատարակութիւն, որ բովանդակում է Վիէննայի Մխիթարեան տպարանի ամբողջ պատմութիւնը և հրատարակած բոլոր գրքերի մանրամասն ցուցակը։ Գրքի վերնագիրն է՝ «Eine Skizze der literarisch—typographischen Thätigkeit der Mechitaristen—Congregation in Wien aus Anlass des 50 jährigen Regierungs—Jubiläums Kaiser Franz Joseph I.»։ Գրքի հեղինակն է նոյն տպարանի (և մի և նոյն ժամանակ վանքի մատենադարանի) կառավարիչ Հ. Գրիգորիս վ. Գալէմքեարեան. այնքան շքեղ և մաքուր է տպված, որ ինքն ըստ ինքեան կարող է մի ehef-d'oeuvre համարվել տպագրական գործի։ Ներկայ աշխատութիւնը երևան է հանում այն մեծ կատարելութիւնը, որին հասել է Մխիթարեան տպարանը Վիէննայում։ Գրքի ծածկի վրա տպված է պահարանի պատկերը, որի մէջ զետեղված է ցուցահանդէսի՝ Մխիթարեան բաժինը։ Պահարանը կազմված է 3 մասից և շինված է այն ճարտարապետական ոճով, որ տիրում էր Հայաստանում X մինչև XV դարերում և որի յիշատակն այժմ մնացած է նրա աւերակների վրա։ Պահարանի թէ սիւների և թէ գմբէթի զարդերը նոյնպէս առնված են նոյն ժամանակամիջոցի հայկական նկարչական ձևերից, որոնք պահպանվել են մեզ հասած հայկական մանրանկարների վրա։ Գիրքը սկսվում է երկու լուսանիպ պատկերով, որոնց մէկը ներկայացնում է յօբելինատէր Ֆրանց Յովսէփ I կայսրին, առնված իր վերջին կենդանագրից, և միւսը՝ միաբանութեան հիմնադիր Մխիթար Աբբային։ Վերջին պատկերի տակ տպված է այս անմոռանալի վանականի ձեռագիր սուրբգրութիւնը և աւելացրած է հետևեալ կենսագրական տեղեկութիւնը. «Ծնված է 1676 փետրվարի 7-ին Սեբաստիայում, Փոքր-Ասիայում, միաբանութեան հիմն է դրած 1701 սեպտեմբերի 8-ին, և վախճանած է 1749 ապրիլի 27-ին»։ Գիրքը բովանդակում է նաև 9 գնկատիպ պատկեր, որոնք են. միաբանութեան պաշտպաններ՝ Մարիա Թերեզա կայսրուհին, Ֆրանց I կայսրը, Ֆէրդինանդ կայսրը, այժմեան կայսրը պատանեկան հասակում (1848-ին) և միաբանութեան աբբեպիսկոպոս աբբահայրերը խսկզբանէ մինչև հիմա. Հ. Ատուռատատուր վ. Բաբիկեան (վախճ. 1825), Հ. Արիստակէս վ. Աղարեան (վախճ. 1855), Հ. Յակոբոս վ. Բօղաջեան (վախճ. 1883), Հ. Վարդան վ. Ըստկարեան (վախճ. 1886) և այժմեան աբբահայրը՝ հանրածանօթ բանաստէր Հ. Արսէն վ. Այտնեան, որի պատկերի տակ ևս առաջ են բերված նրա տիտղոսները,—«Աբբեպիսկոպոս Սալամինայի (Կիպրոսի), Նորին Քահան. Սրբութեան (պապի) Տաներէց և Գահընթերակաց, հռոմէական կոմս, Մեծ-խաչակիր ասպետ Ֆրանց-Յոզէֆ չքաւորանի, գիտոր աստուածաբանութեան» և այլն. (ծն. 19 յունվ. 1824 և ընար. 1886 օգոստ. 19-ին)։

Հայր Գալէմքեարեան իր այս գեղեցիկ աշխատութեան մէջ պատմում է Մխիթարեան տպարանի ամբողջ կեանքը, որ մի և նոյն ժամանակ Մխիթարեան միաբանութեան այս վիէննական ճիւղի ամբողջ գրական—տպարանական գործունէութիւնն է ներկայացնում։ Ով որ եղել է Վիէննայում և ունեցել է Մխիթարեան վանքը այցելելու հաճոյքը, նա անշուշտ հիացմունքով դիտել է թէ ինչպիսի գուրգուրանքով են վերաբերվում Մխիթարեան հայրերը դէպի իրանց տպարանը և ինչ անդուլ ու անխոնջ աշխատանք են գրած դնում նրա վրա, մտցնելով նրա մէջ ժամանակի պահանջած բոլոր բարեփոխութիւնները, և արուեստի վերջին կատարելագործութիւնները, որոնց շնորհիւ այդ տպարանը ոչ թէ միայն հայոց մէջ առաջինն է և ամենակատարեալը, այլ նոյն իսկ Եւրօպայում էլ նշանաւորներից մէկը։

Վիէննայի միաբանութեան տպագրական գործունէութիւնը սկսված է նախ Տրիեստում, երբ Մխիթար աբբահօր մահվանից յետոյ 21 քահանայ ս. Ղազարի վանքից հեռանալով՝ եկան հաստատվեցան այդտեղ։ Աւստրիայի այն ժամանակի միապետը՝ Մարիա Թերեզա կայսրուհին, սիրով ընդունելով այդ պանդուխտ և չքաւոր հայ վարդապետներին, 1775-ի հրովարտակով իրաւունք տուեց նրանց արևելեան և արևմտեան լեզուների մի տպարան հիմնել Տրիեստում, որը և նոյն տարին աջողեցան հաստատել։ Միջանկեալ կերպով պատմենք այստեղ թէ շատ նշանաւոր է մեծ կայսրուհու այդ՝ հայոց վերաբերեալ և 53 յօդուածներից բաղկացած հրովարտակը, որով մեծամեծ արտօնութիւններ էր շնորհում թէ Մխիթարեաններին և թէ առհասարակ հայ գաղթականութեան. իրաւունք էր տալիս յատուկ ազգային գլուխ ունենալ և բոլոր արևելեան միւս ազգերից եկած գաղթականներին էլ ենթարկում էր հայոց ազգապետին։

նուէրներ և վկայականներ: Օրինակ, այն մտեսութիւնը, որ իր կազմակերպութեամբ կը համարվի առաջնակարգ, կը ստանայ 5,000 բուբլի և ոսկէ մեդալ 500 ր. արժողութեամբ, երկրորդ կարգի մտեսութիւնը կը ստանայ 3,000 բուբլի և 300 բուբլիանոց մեդալ, երրորդ կարգինը 1,000 բուբլի և 100 բուբլիանոց մեդալ: Իւրաքանչիւր տարի պարգևատրութեան պէտք է արժանանան միայն երեք նահանգի մտեսութիւններ, և ապա հերթը պէտք է հասնի հետևեալ երեք նահանգներին: Իւրաքանչիւր տարի երեք նահանգի համար կը նշանակվի 49,500 ր. պարգևադրամ, և բացի այդ, պէտք է յատկացվի մտեսութիւնները քննող և հետազօտող անձերի համար 5,500 ր.:

Մտեսութիւնները պարգևատրելու ձևը վաղուց յայտնի ձև է և ընդունված է արտասահմանում: Նրա առաւելութիւնը նրանումն է, որ այստեղ պարգևի արժանացող կալուածքը մի արհեստական մտեսութիւն չէ, այլ բոլորովին բնական, կենսական, շրջապատող հանգամանքներին և պահանջներին համապատասխանող մի մտեսութիւն, որ հէնց այն պատճառով շատ ուսանելի է, որ նա ոչ միայն պարունակում է իր մէջ կատարելագործութիւններ, այլ և բերում է կալուածատիրոջ իսկական շահ, աներկբայելի օգուտ, և ուրեմն կարող է օրինակելի լինել և ուրիշների համար: Այդպիսի մտեսութիւնների մէջ կարելի է սովորել գործնական գիւղատնտեսութիւն և սովորածը անմիջապէս գործադրել շրջակայ միւս մտեսութիւնների մէջ:

Միայն մի անյարմարութիւն կայ ծրագրի մէջ, այդ այն է, որ նա պարգևատրվող կալուածքի մեծութիւնն ընդունում է ոչ պակաս քան 10 դեսիատին և այդպիսով զրկում է գիւղացիներին և փոքր կալուածատէրերին այն պարգևներից, որոնց նրանք արժանի կարող էին լինել իրանց գործունէութեամբ:

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ ՄԷԿը

—

Գաւառական թղթակցութիւնները, որոնք հաղորդում էին հացի և անասունների պաշարի սակաւութիւնը, մի և նոյն ժամանակ հրապարակ էին հանում մեր գիւղական հին ցաւերից մէկը, այն՝ որ մի գիւղից միւսը պաշար տեղափոխելը անհնարին է շնորհիւ վատ ճանապարհների, անտանելի հաղորդակցութեան: Սա այնպիսի մի վատ վիճակ է ստեղծում գիւղացու համար, ինչպիսին շատ քչերը կարող են երևակայել: Ցեսնել միայն պէտք է, թէ մի գիւղից միւսը, ուր տարածութիւնը հազիւ 2—3 վերստ է, որ և է բան տեղափոխելիս, ինչպիսի հրէշաւոր տանջանքներ են կրում թէ անասունը և թէ նրա տէրը: Էլ չենք խօսում սայլերի, այն էլ մեր նահապետական սայլերի մասին, որոնց նոյն իսկ հարթ յատակի վրա տեղից շարժելու համար՝ բաւական ոյժ է հարկաւոր: Սրանք միանդամայն անպէտք են հանդիսանում գիւղացու համար—հաղորդակցութեան այդպիսի դժոխային պայմաններում: Իսկ եթէ մէկը սխալվեց և սայլը ճանապարհ հանեց, էլ քանի սամի ու սանի, դամշի պիտի կոտրվի, քանի լուծ եզ ու գոմէշ պիտի բերեն մօտակայ գիւղերից, քանի հոգի պիտի բան ու գործերը թողնեն, որ թաղված սայլը տեղից շարժեն—դրա համար ամբողջ բեռը պիտի քանդեն ու ցեխի մէջ թափեն, նոր մէջք-մէջքի տալով ցեխի մէջ կորած ակները հանեն, մաքրեն, դրստեն, նորից բարձեն ու ճանապարհ ընկնեն, աղօթելով, որ անվնաս տեղ հասնեն... Այս է ահա իրողութիւնը, որ անգին դժուարութիւն է պատճառում գիւղական ազգաբնակութեան:

Ո՞ւմ պարտականութիւնն է այդ մասին հոգալ: Միմիայն գաւառապետների, որոնք մի ամբողջ գաւառի իշխանաւոր լինելով, պարտաւոր են իրանց յանձնված գաւառը բարւոքել: Բայց, դժբաղդաբար, մեր գաւառապետները մեծ մասամբ լոկ պօլիցիականներ են հանդիսանում, բայց ոչ թէ ժողովրդին կարեկցող հայր: Եթէ մեր գիւղական հասարակութեան մէջ ինտելիգենտ տարրը մի աչքի ընկնող տոկոս կազմէր, եթէ նրանց տանտուտէրները անպէտք մարդիկ չը լինէին, այն ժամանակ գաւառապետներից էլ կարելի էր չը պահանջել, որովհետև հէնց իրանք հասկանալով իրանց օգուտը, կը հոգային իրանց վիճակը: Բայց քանի որ այդպէս չէ, պատասխանատուութիւնը միմիայն գաւառապետների վրա է ծանրանում: Ո՛չ փող է հարկաւոր, ոչ կապիտալ: Գիւղացին ունի ազատ ժամանակ, և ահա դրանից պիտի օգտվել: Այսօր մի գիւղի բնակիչները միւսներին կօգնեն, վաղը՝ հակառակը: Իսկ դրա համար հարկաւոր է միայն կամք: Նոյն իսկ այդպիսի օրինակ էլ կայ: Մի ժամանակ Սուրմալու գաւառապետ Փիրումեանցին անչափ հայհոյողներ ու անիծողներ կը գտնէիք. պատճառը այն էր, որ գիւղացիներին ձրի աշխատեցնում էր իրանց ճանապարհները չինելու համար: Շատ չանցաւ, երբ գիւղացին իր աշխատանքի քաղցր պտուղները վայելեց, նսեմացան գաւառապետ Փիրումեանցի պակասութիւնները և նա խեղճ գիւղացիների համար պաշտելի եղաւ. այնուհետև սկսեցին օրհնել, և միշտ կօրհնեն նրա կեանքը ու օջախը, որովհետև այդ ճանապարհներով անվնաս ու անփորձ անցնում է ոչ միայն գիւղացու հնաղարեան սայլը, կալուածատիրոջ կառքը, այլ և եւրոպացի ճանապարհորդի վեղոսիպեդը: Ահա մի ցաւ, որը բժշկելու համար միմիայն բարի ցանկութիւն է հարկաւոր:

Ռ. Ցովհաննէսեանց

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

—

Յունիսի 14-ին

Երկու ամսից ի վեր մեր գիւղում չը տեսնված իրարանցում է տիրում: Օրվայ հերոսն է տանտուտէր Ս.: Ամենքի խօսակցութիւնը նրա շուրջն է պտտվում և նրա գլխին է թափվում հազարաւոր բերանների անէծք: Ահա պատճառը. 1895 թւի տանտուտէրական ընտրութիւնների ժամանակ առաջ անցաւ իրան ինտելիգենտ ձևացնող Ս. և յանուն հասարակական շահերի դնելով իր տուփը, մի կերպ աջողեցրեց ստանալ տանտուտէրական շղթան: Եւ ահա նոյն այն մարդը, որն առաջ ոգևորութեամբ յարձակվում էր կաշառակերութեան, գողութեան, վաշխառութեան և այլ չարիքների դէմ, նոյն Ս., գործի գլուխ անցնելուց յետոյ՝ բոլորովին հակառակ ընթացք բռնեց: Նրա օրով կաշառակերութիւնը մեր գիւղում առնելի ծաւալ ստացաւ. գողերը սունկի պէս աճեցին և իրանց զարմանալի քաջագործութիւններով ահ ու սարսափի մէջ գցեցին ամբողջ գիւղը: Վաշխառուները նորանոր հնարագիտութիւններ սովորեցին իրանց համագիւղացիների արիւն քրտինքով վաստակած վերջին կօպէկները խլելու... գիւղը վերջին ծայր թշուառութեան հասաւ: Իսկ տանտուտէրը ոչ մի վճռական միջոց գործ չը դրեց այս բոլոր չարիքների առաջն առնելու համար, այլ բաւականացաւ տարեկան հինգ հարիւր բուբլի ռոճիկ ստանալով, և ճիպոտը պտտեցնելով փողոցներում ման դալ: Գիւղացիների տրտունջը Ս-ի դէմ օրէցօր սաստկանում էր: Անբաւականութիւնը ընդհանուր էր, այնպէս որ Ս., չը կարողանալով դիմադրել գիւղացիների միահամուռ պահանջներին, վերջապէս ստիպված եղաւ հրաժարվել իր պաշտօնից: Բայց դրանով ամեն բան չը վերջացաւ: Ընտրվեցին հաշուեսներ տանտուտէր Ս-ի հաշիւները ստուգելու համար: Հաշուեսները, գործը քննելով, եկել են այն եզրակացութեան, որ գիւղական պաշտօնատար անձինք իւրացրել են աւելի քան երկու հազար բուբլի հասարակական գումար: Այդ գործը յանձնված է պատշաճաւոր իշխանութեան և ներկայումս դեռ շարունակվում է նրա քննութիւնը: Անկասկած, տանտուտէր Ս. իր արբանեակներով կենթարկվեն օրէնքի խստութեանը և կը կրեն իրանց արժանի պատիժը, որը և մի լաւ խրատական դաս կը լինի ապագայ պաշտօնատար անձանց համար:

Այս բոլորի մէջ մխիթարականը միայն այն է, որ մեր գիւղացիները, որոնք երկար տարիներից ի վեր սովորել են, գիւղի դեկը յանձնելով աղա պաշտօնիներին, հեռու մնալ հասարակական ամեն գործերից, այժմ սկսել են մասնակցել այդ գործերի մէջ: Այժմ գիւղացիները առաջվայ նման այլ ևս անպայման լռութեամբ չեն ընդունում իրանց իշխանաւոր աղաների վճիռները և հեշտութեամբ չեն հնազանդվում նրանց ապօրինի հրամաններին: Գիւղացիները փոքր առ փոքր աչքաբացվում են: Նրանք այժմ հարձակվում են քննադատել աղաների կատարած գործերը և հրապարակային հաշիւ պահանջել նրանցից: Գիւղական ամբոխը արդէն ձանձրացել է վաշխառու աղաների անիրաւութիւններից և զզուանքով երես է դարձնում նրանցից: Թմրած ժողովուրդը գիտակցութեան նշաններ է ցոյց տալիս, որը միանդամայն ուրախալի է:

Շ.

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ

—

Պաղաւերջ, յունիսի 5-ին

Մինչև մայիս ամսի վերջը՝ Ղափանի գիւղերի մէջ հացահատիկների գները զանազան էին: Հացահատիկ վաճառողներից մէկը բարձր գնով էր ծախում, միւսը՝ ցածր: Գլխաւոր պատճառը պղնձահանքերի շրջակայքում եղող մի քանի անխիղճ ցորենատէրերն էին, որոնց շրջանում կային և փարաջաւորներ: Ցորենի սօմարը այդ պարոնները ծախում էին 4 բուբլով, իսկ մի փարաջաւոր նոյն իսկ կորեկի սօմարը ծախել է ցորենի գնով: Եթէ Ղափանի ժողովրդի յոյսը մնար տեղացի անգութ վաշխառուների վրա, սովամահ եղողների թիւը մեծ կը լինէր: Բարեբաղդաբար, այս տարվայ անբերրիութեան միջոցին մի քանի բարի մարդիկ օգնութեան հասան Ղափանի կարօտեալներին: Օրինակ, Թիֆլիսաբնակ Ալէքսանդր Մէլիք-Ազարեանցի կարգադրութեամբ, ինչպէս արդէն հաղորդված էր, նրա պղնձահանքի կառավարիչ Խ. Նալբանդեանց օգնեց գիւղացիներին: Օգնեցին կարօտեալներին կանխիկ փողերով և Գիւտգիւմ գիւղացի Անդրէաս Բաբայեան և Բեխ գիւղացի Յարութիւնբէկ Մէլիք-Փարսադանեանց, որոնցից իւրաքանչիւրը տուեց 2 հազար բուբլի, որպէս զի բաժանվեն գիւղացիներին, առանց տոկոսի, մի տարի ժամանակով: Իսկ Գիւտգիւմ գիւղացի մի պարոն, որ այժմ բնակվում է Բաքու և ունի նաւթային հանքեր, այն է Մանուչար Աւագեանց, նուիրել է 5 հարիւր բուբլի պղնձահանքերի չրջակայ կարօտեալներին: Շնորհակալութեան արժանի են այդ պարոնները: Պղնձահանքերի մօտիկ գիւղերում մի քանի վաշխառուների ցորենների հորերը մնացին փակ. դեռ սպասում են, որ էլի թանգանայ, բայց ի մեծ դժբաղդութիւն նրանց, պուդը 2 բուբլով ծախվող ցորենը այժմ ծախվում է 1 բուբլի 35 կօպէկով:

Մ. Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 8-ին

Օրէնքը մի շատ յայտնի գաղափար է: Աշխարհի վրա գոյութիւն ունեցող ամեն մի հասարակութիւն, լինի դա մանաւոր, հասարակական թէ պետական, պիտի ունենայ իր հիմնական օրէնքները, որոնք անհրաժեշտաբար գործադրվեն, հաւասար կերպով, ամենքի վերաբերմամբ: Եւ ուր օրէնք չը կայ, այնտեղ պիտի թագաւորէ կամայականութիւն, քմահաճութիւն, հաստատութիւնը կը դառնայ անխորհուրդ, մեռած, շատ անգամ նոյն իսկ ատելի, արհամարհելի: Այդ տարբերակն ճշմարտութիւնը կրկնելու առիթ տուեց մի քահանայի, այն է տէր-Սարգիս Երիցեանի դրութիւնը:

Ահա տարօրինակ դէպքը: Նա քահանայ է ձեռնադրված Ծղնէթ գիւղի համար. մի քանի ժամանակից յետոյ մի առաջնորդ նրան տեղափոխում է Դուշէթ, երևի օրէնքի հիման վրա, այսինքն, որ քահանային փոխադրել կարելի է մի տեղից միւս տեղ, որոշ պայմաններում: Երկրորդ տեղում Երիցեան քահանան կարգվում է և գործակալ. երևի այս էլ պատճառաբանված է եղել մի որ և է բանով, որն օրէնքում նշանակված է. այնուհետև նա դառնում է նոյն վիճակի ուսումնարանների և՛ հիմնադիրը և՛ հովանաւորը: Բայց ահա փոխվում է առաջնորդը, յաջորդում է մի ուրիշը. սա հանում է քահանային գործակալութիւնից: Ի՞նչով է պատճառաբանված,—այդ ոչ ոքի յայտնի չէ. և այնքան էլ հետաքրքիր չէ: Քահանան դուրս է հանվում իր տեղից. նրան չեն ուղարկում ոչ Դուշէթ, ոչ Ծղնէթ: Մի քանի ամսվայ ընթացքում քահանայի վերաբերմամբ տանենակ, միմեանց հակասող հրամաններ են արձակվել.—Էջմիածնի սինոդը Դուշէթից փոխադրում է քահանային Թիֆլիս. Թիֆլիսի կոնսիստորիան չէ համաձայնվում. ուղարկում են Մուխրան. մի ամսից յետոյ կրկին Դուշէթ. ամիս և կէս յետոյ նորից Ծղնէթ, երեք ամսից յետոյ Քուլթայիս: Մի ժամանակից յետոյ սինոդի պահանջմամբ խեղճը փոխադրվում է կրկին Թիֆլիս. կոնսիստորիան այս անգամ էլ դիմեց Ս., գործի գլուխ անցնելուց յետոյ՝ բոլորովին հակառակ ընթացք բռնեց: Նրա օրով կաշառակերութիւնը մեր գիւղում առնելի ծաւալ ստացաւ. գողերը սունկի պէս աճեցին և իրանց զարմանալի քաջագործութիւններով ահ ու սարսափի մէջ գցեցին ամբողջ գիւղը: Վաշխառուները նորանոր հնարագիտութիւններ սովորեցին իրանց համագիւղացիների արիւն քրտինքով վաստակած վերջին կօպէկները խլելու... գիւղը վերջին ծայր թշուառութեան հասաւ: Իսկ տանտուտէրը ոչ մի վճռական միջոց գործ չը դրեց այս բոլոր չարիքների առաջն առնելու համար, այլ բաւականացաւ տարեկան հինգ հարիւր բուբլի ռոճիկ ստանալով, և ճիպոտը պտտեցնելով փողոցներում ման դալ: Գիւղացիների տրտունջը Ս-ի դէմ օրէցօր սաստկանում էր: Անբաւականութիւնը ընդհանուր էր, այնպէս որ Ս., չը կարողանալով դիմադրել գիւղացիների միահամուռ պահանջներին, վերջապէս ստիպված եղաւ հրաժարվել իր պաշտօնից: Բայց դրանով ամեն բան չը վերջացաւ: Ընտրվեցին հաշուեսներ տանտուտէր Ս-ի հաշիւները ստուգելու համար: Հաշուեսները, գործը քննելով, եկել են այն եզրակացութեան, որ գիւղական պաշտօնատար անձինք իւրացրել են աւելի քան երկու հազար բուբլի հասարակական գումար: Այդ գործը յանձնված է պատշաճաւոր իշխանութեան և ներկայումս դեռ շարունակվում է նրա քննութիւնը: Անկասկած, տանտուտէր Ս. իր արբանեակներով կենթարկվեն օրէնքի խստութեանը և կը կրեն իրանց արժանի պատիժը, որը և մի լաւ խրատական դաս կը լինի ապագայ պաշտօնատար անձանց համար:

Այս բոլորի մէջ միխիթարականը միայն այն է, որ մեր գիւղացիները, որոնք երկար տարիներից ի վեր սովորել են, գիւղի դեկը յանձնելով աղա պաշտօնիներին, հեռու մնալ հասարակական ամեն գործերից, այժմ սկսել են մասնակցել այդ գործերի մէջ: Այժմ գիւղացիները առաջվայ նման այլ ևս անպայման լռութեամբ չեն ընդունում իրանց իշխանաւոր աղաների վճիռները և հեշտութեամբ չեն հնազանդվում նրանց ապօրինի հրամաններին: Գիւղացիները փոքր առ փոքր աչքաբացվում են: Նրանք այժմ հարձակվում են քննադատել աղաների կատարած գործերը և հրապարակային հաշիւ պահանջել նրանցից: Գիւղական ամբոխը արդէն ձանձրացել է վաշխառու աղաների անիրաւութիւններից և զզուանքով երես է դարձնում նրանցից: Թմրած ժողովուրդը գիտակցութեան նշաններ է ցոյց տալիս, որը միանդամայն ուրախալի է:

Շ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 8-ին

Օրէնքը մի շատ յայտնի գաղափար է: Աշխարհի վրա գոյութիւն ունեցող ամեն մի հասարակութիւն, լինի դա մանաւոր, հասարակական թէ պետական, պիտի ունենայ իր հիմնական օրէնքները, որոնք անհրաժեշտաբար գործադրվեն, հաւասար կերպով, ամենքի վերաբերմամբ: Եւ ուր օրէնք չը կայ, այնտեղ պիտի թագաւորէ կամայականութիւն, քմահաճութիւն, հաստատութիւնը կը դառնայ անխորհուրդ, մեռած, շատ անգամ նոյն իսկ ատելի, արհամարհելի: Այդ տարբերակն ճշմարտութիւնը կրկնելու առիթ տուեց մի քահանայի, այն է տէր-Սարգիս Երիցեանի դրութիւնը:

Ահա տարօրինակ դէպքը: Նա քահանայ է ձեռնադրված Ծղնէթ գիւղի համար. մի քանի ժամանակից յետոյ մի առաջնորդ նրան տեղափոխում է Դուշէթ, երևի օրէնքի հիման վրա, այսինքն, որ քահանային փոխադրել կարելի է մի տեղից միւս տեղ, որոշ պայմաններում: Երկրորդ տեղում Երիցեան քահանան կարգվում է և գործակալ. երևի այս էլ պատճառաբանված է եղել մի որ և է բանով, որն օրէնքում նշանակված է. այնուհետև նա դառնում է նոյն վիճակի ուսումնարանների և՛ հիմնադիրը և՛ հովանաւորը: Բայց ահա փոխվում է առաջնորդը, յաջորդում է մի ուրիշը. սա հանում է քահանային գործակալութիւնից: Ի՞նչով է պատճառաբանված,—այդ ոչ ոքի յայտնի չէ. և այնքան էլ հետաքրքիր չէ: Քահանան դուրս է հանվում իր տեղից. նրան չեն ուղարկում ոչ Դուշէթ, ոչ Ծղնէթ: Մի քանի ամսվայ ընթացքում քահանայի վերաբերմամբ տանենակ, միմեանց հակասող հրամաններ են արձակվել.—Էջմիածնի սինոդը Դուշէթից փոխադրում է քահանային Թիֆլիս. Թիֆլիսի կոնսիստորիան չէ համաձայնվում. ուղարկում են Մուխրան. մի ամսից յետոյ կրկին Դուշէթ. ամիս և կէս յետոյ նորից Ծղնէթ, երեք ամսից յետոյ Քուլթայիս: Մի ժամանակից յետոյ սինոդի պահանջմամբ խեղճը փոխադրվում է կրկին Թիֆլիս. կոնսիստորիան այս անգամ էլ սկսում է գործել այս նոր տպարանը, որ հետզհետէ մեծանալով և առաջանալով, հասնում է այժմեան պայծառ վիճակին: Հ. Գալէմքեարեան ընդարձակօրէն նկարագրում է այս՝ աստիճանաբար առաջացումը, որը մասամբ հրատարակել է արդէն մի գերմանացի հեղինակ, դր. Ա. Մայէր իր՝ (Wiens Buchdrucker—geschichte 1887 թ.) Վիէննայի տպարանների պատմութեան նուիրած աշխատութեան մէջ: 1837-ին Մխիթարեանները կառուցանում են իրանց այժմեան ընդարձակ վանքը *), որի մի թեը ամբողջապէս յատկացնում են տպարանին: Այս նոր շէնքի հիմքի քարը Աւստրիայի կայսրն ու կայսրուհի անձամբ են դրել և այդ հանդիսաւոր օրը տպարանի 26 մեքենաներն էլ սկսում են բանել և կայսերական զոյգի ներկայութեամբ մի մեքենան գերմաներէն մի ուղերձ է տպում, իսկ մնացած 25-ը տպում են 25 զանազան լեզուներով հայկական պատարագի «Որ օրհնես զայնոսիկ» աղօթքը և ընծայում օգոստափառ զոյգին: Տպարանը այնուհետև նոր տառերով այնքան ճոխացել է, որ 1893-ին, Լևոն XIII պապի եպիսկոպոսութեան յիսնամեակի առթիւ միաբանութիւնը նոյն աղօթքը տպում է 50 լեզուով և նուիրում է քահանայապետին:

(Կը շարունակվի)

*) «Հանդէս Ամսօրեայի» 1889 թւի էջ 92-ի մէջ հրատարակված է այդ հրովարտակի ընագրի ամբողջ թարգմանութիւնը: Նոյն թւի 28 և 29 էջերում տեղեկութիւն կայ Տրիեստի սակաւաթիւ հայ գաղթականութեան մնացորդների մասին. յիշվում է և մէջ այլոց ոմն Ֆ. Հէրմէթեան, որի մերաութեան ինքնայրն է եղել աւստրիական Ֆրանց I կայսրը Վիէննայի Մխիթարեան վանքում և նա մինչև 1880 թ. շարունակ 15 տարի Տրիեստի քաղաքագլխի օգնական է եղել: Տրիեստի քաղաքապետական պալատի մէջ մինչև հիմա կայ մարմարեայ մի յիշատակարան, որ քաղաքը կանգնել է իր այդ հայազգի նշանաւոր քաղաքային գործիչին:

Այս արտօնութիւնները 25—30 հայ ընտանիք միայն կարողացան դրաւել դէպի Տրիեստ անցեալ դարի վերջը *): Աւելի ճարպիկ գտնվեցան յոյները, որոնք բազմութեամբ թափվեցան նոր ծաղկել սկսած այդ նաւահանգիստը և հայերին շնորհված արտօնութիւններն իրանք սկսեցին վայելել: Այժմ Տրիեստում յունական գաղթականութիւնը կարևոր դիրք է գրաւում և նա ունի իր սեփական լրագիրը՝ «Իմէրա» (Օր), որ յայտնի է իր հայրենասիրական ուղղութեամբ և պաշտպան է եղել նաև հայոց հարցին:— Միայն Տրիեստում չէ, որ հայերը զանազան հանգամանքների շնորհիւ չեն կարողացել լիովին օգուտ քաղել իրանց արտօնված դիրքից և տեղի են տուել յոյներին, որոնք ասպարէզը հեղհեղ խլել են նրանց ձեռքից. նոյն երևոյթն աւելի մեծ չափով մենք տեսնում ենք Եգիպտոսում, ուր հայերն աւելի մեծ համակրութեամբ էին ընդունվում յայտնի Մէհմէդ Ալի փաշայից և իր յաջորդ խէդիվներից, և մեծ դիւրութիւններ վայելում միշտ: Բայց վերջի վերջոյ չեն կարողացել դիմանալ և այժմ իրանց մրցակից յոյներն են գրաւում նրանց տեղերը երկրի տնտեսական ասպարէզում, ուր մի ժամանակ գրեթէ միայն հայերն էին տիրում կամ տիրելու ամեն յարմարութիւն ունէին: Բայց տեղը չէ այստեղ երկարօրէն քննել այս խնդիրը, որ ինքն ըստ ինքեան հետաքրքրութիւնից զուրկ չէ, ուստի անցնենք մեր նիւթին:

1776 թւին Մխիթարեանները հաստատում են այնտեղ իրանց տպարանը, որ տևում է մինչև 1810 թ.: Իրանց տպած առաջին գիրքը եղել է «Յորդորակ առ պաշտօնասիրութիւն սրբոյ Աստուածածնի», գրաբար: Այդ իսկ տարին աւստրիական կայսրը անձամբ եկել է նորահաստատ հայոց տպարանը դիտելու: 1780-ին էլ, իբրև շնորհակալութիւն՝ Մարիա Թերեզա կայսրուհու պատուին տպել և նուիրել են նրան մի հայերէն գրաբար գիրք, նոյնպէս կրօնական.—բացի հայերէն տառերից նրանք ձեռք են բերել մեծ թիւով լատինական, գերմանական և յունական տառեր և տպել են գրքեր թէ այդ և թէ ֆրանսերէն ու իտալերէն լեզուներով: Բայց նրանց գործունէութեան գլխաւոր ճիւղն եղել է, բնականաբար, հայ տպագրութիւնը: 1776-ից մինչև 1810, 35 տարվայ ընթացքում նրանք տպել են այնտեղ մօտ 45 հայերէն և 25 հայատառ թիւրքերէն գրքեր, որոնցից մի քանիսը մէկից աւելի անգամ լոյս են տեսել: Շնորհիւ իրանց անխոնջ և յարատև ջանքերին և աշխատասէր բնաւորութեան, Մխիթարեանները կարողացել են անշարժ կայքեր ևս ձեռք բերել Տրիեստում և մեծապէս զարգացնել իրանց տպարանը. իրանց գտնված փողոցը սկսել է կրել «Հայոց փողոց» անունը, որ եթէ չենք սխալվում՝ մինչև հիմա էլ այդպէս է յիշվում: Սակայն այդ ծաղկած վիճակը երկար չէ տևում: Հաւնում են Նապոլէոնեան պատերազմները. Աւստրիան ջախջախվում է յաղթական կօրսիկացու ոտքերի տակ և Տրիեստ աւերվում է: 1810-ին Մխիթարեանների բոլոր ստացուածքը՝ թէ կալուածքը, թէ տպարանը և թէ նոյն իսկ իրանց բնակարանները՝ քանդվում և կողոպտվում են ենթարկվում Նապոլէոնի բանակից. նրանք զրկվում են իրանց բոլոր ունեցածից և դարձեալ պանդխտութեան ցուպը ձեռին, չքաւոր ու կարօտ վիճակի մէջ, գալիս մտնում են Վիէննա *): Մարիա Թերէզա կայսրուհին հովանաւորում է նրանց և նրանք 1810 թ. դեկտեմբերի 5-ին կայսերական հրովարտակով արտօնութիւն են ստանում հաստատվել Վիէննայում և նոյնպիսի մի տպարան բանալ այստեղ: 1811 թւի վերջից սկսում է գործել այս նոր տպարանը, որ հետզհետէ մեծանալով և առաջանալով, հասնում է այժմեան պայծառ վիճակին: Հ. Գալէմքեարեան ընդարձակօրէն նկարագրում է այս՝ աստիճանաբար առաջացումը, որը մասամբ հրատարակել է արդէն մի գերմանացի հեղինակ, դր. Ա. Մայէր իր՝ (Wiens Buchdrucker—geschichte 1887 թ.) Վիէննայի տպարանների պատմութեան նուիրած աշխատութեան մէջ: 1837-ին Մխիթարեանները կառուցանում են իրանց այժմեան ընդարձակ վանքը *), որի մի թեը ամբողջապէս յատկացնում են տպարանին: Այս նոր շէնքի հիմքի քարը Աւստրիայի կայսրն ու կայսրուհի անձամբ են դրել և այդ հանդիսաւոր օրը տպարանի 26 մեքենաներն էլ սկսում են բանել և կայսերական զոյգի ներկայութեամբ մի մեքենան գերմաներէն մի ուղերձ է տպում, իսկ մնացած 25-ը տպում են 25 զանազան լեզուներով հայկական պատարագի «Որ օրհնես զայնոսիկ» աղօթքը և ընծայում օգոստափառ զոյգին: Տպարանը այնուհետև նոր տառերով այնքան ճոխացել է, որ 1893-ին, Լևոն XIII պապի եպիսկոպոսութեան յիսնամեակի առթիւ միաբանութիւնը նոյն աղօթքը տպում է 50 լեզուով և նուիրում է քահանայապետին:

(Կը շարունակվի)

*) Այս աւերումից յետոյ, Մխիթարեանները՝ երբ արդէն վերջնականապէս հաստատված էին Վիէննայում, դարձեալ ձեռք բերին կալուածներ Տրիեստում, և իրանցից մէկը մնում էր միշտ այնտեղ իբրև գործակալ և կառավարիչ: Երբ Խրիմեան կաթողիկոսական պատգամաւորների հետ Տրիեստ եկաւ, Մխիթարեան գործակալ, Հ. Սամ. վ. Քաթիբեան էր նրան ընդառաջ եկող և ընդունողը Տրիեստում: Հ. Քաթիբեան, որ նշանաւոր գերմանագէտ էր, այժմ վախճանած է և որչափ մեզ յայտնի է նրա տեղը դեռ ևս Մխիթարեան գործակալ ոչ ոք չէ նշանակված:

*) Վիէննայի այն փողոցը, ուր գտնվում է Մխիթարեանների վանքը, տպարանը և եկեղեցին—գերմաներէնով է կոչվում, Mechitaristengasse.

չէ համաձայնվում, հրամանը երրորդվում է. Վեհափառի հրամանով նա գնում է Բագու. կրկին խոչնդոտ: Նշանակվում է Թիֆլիսի եկեղեցիներից մինի քահանայ,—դաղտնի հալածանք, և կարգակից ընկերից յիշողներ և հայհոյանքներ: Ցաշորդ օրը կրկին մի հրաման՝ մի այլ եկեղեցու համար, և դեռ տեսնենք քանի այսօրինակ հրամաններ կը տեղան Վանքի մայր-եկեղեցու գաւթից:

Ակամայ հարց է ծագում.—ինչ իրաւունքով, ինչ օրէնքով հանեց առաջին առաջնորդը իր ձեռնադրութեան վայրից՝ ժողովրդից սիրված քահանային, և նշանակեց մի այլ տեղ: Երևի օրէնքի հիման վրա էր: Ուրեմն իրաւունք ունենք սպասելու, որ քահանան մնայ այս տեղում մինչև այն ժամանակ, երբ դուրս հանելը կը պատճառաբանվի մի որ և է խելացի, օրէնքում եղած մի որ և է հանդամանքով: Բայց ինչ է ներկայացնում այդ քահանայի դրութիւնը —քահանայ գիւղում, յեսոյ քաղաքում, յեսոյ գործակալ, յեսոյ կրկին միայն քահանայ, կրկին գիւղում, անվերջ փոփոխութիւններով, և երկու տարվայ միջոցում համարեա առանց ծուխի: Երկրորդ առաջնորդի ժամանակ այս քահանայի անկումը բացատրում են նրանով, որ առաջնորդը չէ սիրում նրան, բայց միթէ անձնական սէրը և հակառակութիւններն են, որ պիտի վարեն գործերը: Աչքի է ընկնում և այն հանգամանքը, որ առաջնորդը շատ մեծ ճարպիկութեամբ ի դերև է հանում էջմիածնի սինոդի և նոյն իսկ Կաթողիկոսի ջանքերը՝ մի տեղ տալու քահանային: Նշանակելի է նաև այն, որ քահանան մի չաբաթվայ ընթացքում երեք հատ իրար հակասող կամ հաստատող հրամաններ է ստացել: Մենք չենք կամենում շեշտել այն հանգամանքները, որ քահանան զրկված է իր նախկին լաւ վիճակից. մենք ուզում ենք շեշտել միայն այն հանգամանքը, որ քահանային թողնել առանց ծուխի և սպառնալ նիւթականով,—սա կոպիտ բարոյականութիւն է, սա անարդարութիւն է, սա ծաղր է մի ամբողջ ընտանիքի գոյութեան դէմ, ծաղր օրէնքի դէմ: Ա. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան պատրաստում է մի աշխատութիւն քահանայական հարցի մասին, որը մօտիկ ժամանակում լոյս պիտի տեսնի: Այդ նոր աշխատութեան մէջ հեղինակը քննելով հարցը՝ մի և նոյն ժամանակ փորձում է նրա լուծելու միջոցները ցոյց տալ, որով դիրքը առանձին հետաքրքրութիւն կունենայ մեր հասարակութեան համար: Աւելորդ չենք համարում հաղորդել, որ այժմ Պետերբուրգում տպվում է Սեդրակեանի մի ուրիշ գրուածքը՝ այն է «Յովհ. եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը»:

—

Կ. Պոլսի վերջին դէպքերի ժամանակ դադարեցրած «Արևելք» լրագիրը իրաւունք է ստացել նորից հրատարակվելու: Հրատարակութեան համար ստացված է սուլթանական իրադէ:

—

Այժմ Կովկասում փորձեր են անվում հարաւային Ամերիկայից բերված մի բոյսի վրա, որ կոչվում է կվինօա կամ բօտանիկական անունով՝ խենօպոդիում կվինօա: Այդ բոյսը ունի մեծ և հիւթալից տերևներ և բուսնում է շատ բարձր տեղերում, լեռնային արօտատեղերի շրջանում: Փորձեր նշանակված են Նոր-Բայազէտի գաւառի Սեմեոնովկա գիւղում, Դաղստանում և Դուշեթի գաւառի Գուդաուր բարձրաւանդակում: Առ այժմ տեղեկութիւններ կան միայն Սեմեոնովկա գիւղից, որտեղ բոյսը սկսել է աճել: Սեմեոնովկայի փորձերի հսկողն է ագրոնոմ Կանդուրալով, իսկ միւս երկու տեղերինը՝ ագրոնոմ Ա. Պիրալով:

—

Զորեքշաբթի, յունիսի 17-ին, ռուսաց դրամատիկական խումբը ներկայացրեց երկու կոմէդիա՝ «Идеальная жена» և «На законномъ основаніи»: Թատրոնի դատարկութիւնը կատարելապէս համապատասխանում էր այդ պիէսաների անբովանդակութեան:

—

ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. «Մենք ենթադրում ենք, որ տգէտների ձեռնադրութիւնների դէմ պէտք է կռուեն և մեր փոքր ի շատէ ինտելիգէնտ հոգևորականները, բայց դրանք իրանք ինքնիատոր են հանդիսանում տգէտ տիրացուներին քահանայացնելու: Բերենք մի փաստ, որ շատ պախարակելի է: Մեղրիի Փոքր-Թաղ կոչված մասում մի քանի տարի է, որ քահանայ չը կայ և ահա օգտվելով այդ հանգամանքից, մեր ճեմարանական գործակալ քահանան տարիներից ի վեր պատրաստում էր քահանայ ձեռնադրելու իր եղբօրը, որը ոչ մի կրթական ցենզ չունի՝ և քահանայական կոչման անարժան է: Մեղրիի Փոքր-Թաղ կոչված մասի ժողովրդից համախօսական թերթ առնելով՝ այս օրերս նա ճանապարհվեց դէպի Էջմիածին իր եղբօրը ձեռնադրել տալու. բացի դրանից գործակալը տարել է իր հետ և Կալեր գիւղացի մի տգէտ տիրացու, նոյնպէս քահանայացնելու նպատակով: Ինչ անուն տանք այս վարմունքին»:

—

ԼՕՌՈՒՑ մեզ գրում են. «Յունիսի 8-ին լուր տարածվեց, թէ աւազակներ են երևացել Լօռու անտառներում: Բաւական զինված մարդիկ և մօտ 15 կօզակ գնացին նրանց անտառներից դուրս քշելու նպատակով: Մինչև կօզակների հասնելը՝ Դսեղի տանուտէրը իր մարդկանցով հասնում է աւազակներին՝ Աթան գիւղի մօտ, ուր երկու կողմից էլ սկսվում է կատաղի կռիւ: Կռուի ժամանակ աւազակները սպանում են դսեղեցի Խաչատուր Պետրոսեան կարիչ մարդուն և իրանք անհետանում են: Պատմում են, որ սպանվածը երեք անգամ քաշեց կայծակի ռուը, բայց հրացանը չը բացվեց, որովհետև փամփուշտները կեղծած էին: Նա ասել է. «Եթէ մենք ունենայինք լաւ հրացաններ և լաւ փամփուշտներ, աւազակներին բոլորին էլ կը կոտորէինք»: Շատ ցանկալի է, որ կառավարութիւնը ժողովրդին տար լաւ հրացաններ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Հավասի գործակալութեան» հեռագրում են Կ. Պոլսից, որ ֆրանսիացի կրօնաւոր հայր Անդրէ, որ դպրոցական միսիայով ճանապարհորդում էր Սեբաստիայի և Կեսարիայի կողմերը, յարձակում է կրել չէրքէզներից և հազիւ կարողացել է իր անձը ազատել: Իսկ թէ իր հետ գտնվող խումբը, որ տեղացիներից էր բաղկացած, ինչ է եղել, այդ մասին հեռագիրը ոչինչ չէ հաղորդում:

—

Թիւրքիան ըէֆօրմներ է մտցնում: Ի նկատի ունենալով, որ գոյութիւն ունեցող բազմաթիւ բանտերը չեն բաւականանում հետզհետէ աւելացող բանտարկեալներին, Թիւրք կառավարութիւնը որոշել է 3 նոր բանտ կառուցանել Կ. Պոլսում և մի ընդարձակ բանտ էլ Փոքր-Ասիայի Անգօրա քաղաքում... Միմիայն այս վերջինի շինութեան համար, ինչպէս հաղորդում է Կ. Պոլսի «L. Herald» լրագիրը, 250,000 ղրուշ պիտի ծախսվի, որ անում է մօտ 30,000 բուբլի: Թիւրքիան ըէֆօրմներ է մտցնում...

—

Վերջին ալբանական խռովութիւնների առիթով Բ. Դուռը իր պաշտօնական յայտարարութիւնների մէջ արդարանում է ասելով թէ՝ ալբանացի մահմեդականները միմիայն 5 յունապաւան գիւղեր են այրել...

ՊԱՏԵՐԱԶՄ

—

Մանիլիայից «Բէյտերի գործակալութիւնը» հաղորդում է յունիսի 5-ից, որ սպանիական գեներալ Մօնէտ, 3000 խառն զօրքերի հետ, ճանապարհվել է Բուլականից դէպի հարաւ և Մանիլիայի մօտ հանդիպեց ապստամբների մի զօրաբաժնին, որ պաշարել էր երկաթուղին և դարան էր մտել թփերի մէջ: Սկսվեց մի կատաղի կռիւ, որ երեք օրից աւել տևեց: Կռուի մէջ սպանվեց գեներալ Մօնէտ, իսկ նրա զօրաբաժնի մեծ մասը, որ բաղկացած էր տեղացիներից, անցաւ ապստամբների կողմը. այն ժամանակ սպանիացիները, թիւով 500, անձնատուր եղան թշնամուն:

Առհասարակ Ֆիլիպինեան կղզիների դրութիւնը չափազանց վատ է: Սպանիական զինուորները շարունակում են կռուել, բայց նրանց ամբողջ օրերով առանց կերակրի են թողնում. այդ թշուառները մի տեղից միւս տեղն են ընկնում, որովհետև ոչ ոք չը գիտէ թէ ուր է գտնվում թշնամին: Նահանգի բոլոր գլխաւոր քաղաքները անձնատուր են լինում համարեա առանց բողոքի: Արիւնահեղութիւններ համարեա չեն լինում. երկու կողմը հրացաններ են արձակում օդի մէջ, յեսոյ սկսվում է ձեռնամարտը, որի մէջ ապստամբները շատ վարժ են, և քաղաքը անձնատուր է լինում: Համարեա անհաւատալի է թւում, բայց անկասկածելի փաստ է, որ երբ մի որ և է քաղաքի կամ գիւղի բնակիչները ապստամբվում են, սպանիացիները որ և է դիմադրութիւն չեն ցոյց տալիս: Եւ սակայն երկրի դիրքը այնպէս է, որ սպանիացիները կարող էին կռուել թւով նոյն իսկ տասն անգամ աւել թշնամու դէմ: Շատ վատ են պահում իրանց սպանիական օֆիցերները: Մինչդեռ բնակիչները և զինուորները տանջվում են, օֆիցերները թափառում են փողոցներում, այցելում են ռէստօրանները և գարեջրատները, ծխում են, խմում են, ծաղրում են կառավարութիւնը, գլխաւոր հրամանատարներին և այլն: Սան-Խուան մարտկոցի հրամանատարը, չը նայած որ այդ մարտկոցը Մանիլիայի դռներն է բաց անում թշնամու առաջ, գնաց քաղաքը զուարճանալու, թէև նրան լուր էին բերել որ ապստամբները արշաւանք են սկսել: Նրա զօրաբաժինը ստիպված էր կռիւ սկսել առանց հրամանատարի: Երբ կռիւը վերջացաւ, հրամանատարին գտան ընկած վատ անուն ունեցող մի տան մէջ և մահվան դատապարտեցին: Զօրքը և օֆիցերները մեղադրում են գեներալ Աւգուստինի վախկոտութեան մէջ և բոլոր անաջողութիւնները նրան են վերագրում: Երբ գեներալ Աւգուստի զինուորական խորհուրդ դումարեց և առաջարկեց Մանիլիան յանձնել ծովապետ Դէվէյին, որպէս զի քաղաքը չընկնի Ագվինալդօի վայրենի հրոսակների ձեռքը, անբաւականութիւնը փոխվեց բացարձակ ապստամբութեան: Օֆիցերները հարկադրեցին իրանց գլխաւորին հրաժարվել իր պաշտօնից: Նշանաւոր է այն հանգամանքը, որ Ագվինալդօի հրոսակները անգթութիւններ չեն գործում և շատ լաւ են վարվում իրանց ձեռքը ընկած գերիների հետ:

Մենք հաղորդեցինք, որ Կուբայի նահանգապետ մարշալ Բլանկո դիմել էր կուբացի ապստամբների գլխաւոր Գոմէսին, հրաւիրելով նրան միանալ սպանիացիների հետ՝ ամերիկացիներին դիմադրելու համար: Ահա ինչ պատասխանեց Գոմէս Բլանկոյին. «Դուք ներկայացնում էք վարկից զրկված և ուժասպառ դարձած միապետութիւնը, իսկ մենք, ինչպէս Բոլիվարը և Վաշինգտոնը, կռուում ենք ամերիկական սկզբունքի համար: Դուք ասում էք թէ մենք պատկանում ենք մի և նոյն ցեղին. ես կարծում եմ որ գոյութիւն ունի միայն մի ցեղ—մարդկութիւն: Միացեալ Նահանգները, ձեռք առնելով Կուբայի գործը, կատարում են մարդասիրութեան և քաղաքակրթութեան պարտքը: Ես միայն յարգանք եմ տածում դէպի Միացեալ Նահանգները և գրել եմ Մակ-Կինլէյին և Մայլսին՝ յայտնելով իմ շնորհակալութիւնը նրանց միջամտութեան համար: Ես չեմ տեսնում ընտրելու դառնալու վտանգ, որը դուք ցոյց էք տալիս: Եթէ այդպիսի բան տեղի ունենայ, պատմութիւնը կարտասանէ իր դատավճիռը: Ի վերջոյ ես պիտի կրկնեմ, որ շատ ուշ է մեր օրերի մէջ համաձայնութիւն կայացնել»:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Բոստոն, յունիսի 14-ին

Երկու շաբաթի կը մօտենայ Սանտ-Եագոյի գրեթէ անընդհատ ռմբակոծումը: Ծովակալ Սամփսոն իր մարտանաւերու բոլոր թնդանօթները փորձեց Կուբայի հարաւային ամենէն մեծ նաւահանգստին ամրութեանց վրա: Նաւահանգիստը բնական ամրութեամբ օժտված՝ կրցած է սակայն մինչև հիմա դիմանալ. ծովակալը հասկցաւ, որ Սանտ-Եագոն առնելու համար մարտանաւերը միայն չեն բաւեր, ցամաքային բանակ մը կարևոր է: «Եթէ Ամերիկան իմ նաւային ուժերին հաւասարող ցամաքային բանակ մ'ալ ունենար, թերևս այսօր Կուբան արդէն ազատված լինէր»: Երկու շաբաթէ ի վեր եանքի նաւաստիները Ֆարէնհայթի 100 աստիճան տաքութեան տակ կը կռուին. աւելցրէք ասոր վրա թնդանօթներու տաքութիւնը և թերևս գաղափար մը կազմէք թէ ինչ կը նշանակէ արիւն եռալու աստիճան տաքութիւն իսօքը: Եանքի նաւատորմիղին մէջ նաւապետներ կան սակայն, որ ռմբակոծումը սկսելէ վեր իրենց հանդերձները հանած չեն. նաւաստիներ ալ կան, որ երբէք հանդերձ հագած չեն. անցեալ օրերը ծովեղերքի թեթև կռիւ մը ժամանակ, նաւաստիները իրենց ընկերներու օգնութեան փութացին նախամարդու այդ համազգեստով, որովհետև ժամանակ չը կար նոյն իսկ գլխարկ դնելու: Մանիլիայի կռիւի ատեն ալ Դեվէի մարդիկը միայն կօշիկներ հագած էին:

Կառավարութիւնը սակայն անագին գումարներ ստիպված է ծախսել նոյն իսկ այս մերկ զինուորներու գործածած ռազմամթերքին համար. միայն երէկ 200,000 դոլարի արժողութեամբ ռազմամթերք գործածված է ռմբակոծելու Սանտ-Եագոի բերդերը. սպանիացիք իրենց կեանքերով կը վճարեն ասոր փոխարէն: Սպանիացիներ մեռցնելէ աւելի՝ ծովակալ Սամփսոն ճամբայ կը պատրաստէ եանքի ցամաքային բանակին, որ ապստամբներու հետ միացած՝ քաղաքին եանէն պիտի յարձակին թշնամւոյն վրա. այս մեծագոյն պատրաստութիւնը աւարտած լինելով ծովակալը կը սպասէ Ֆի-Ուէսթի 15,000 զինուորներուն, որ երէկ ճամբայ ելան 16 մարտանաւերու պաշտպանութեան տակ Կուբայի հարաւային ծովեղերքը: Զինուորներու փոխադրութեան յապաղումը ծանր և խիստ քննադատութեան առիթ տուաւ լրագրութեան մի մասին. բանակէն դանդատներ ալ եկած են կերակուրի որակին և քանակին նկատմամբ. դժգոհութիւնը, որ արտայայտվեցաւ մամլոյ միջոցաւ, թերևս քիչ մը անիրաւ էր, բայց սա որոշ է թէ ցամաքային բանակը շատ թերութիւններ ունի, գլխաւորաբար պաշտօնէից մէջ, թէ եւրոպական բանակի մը յատուկ կարգ ու կանոնէն զուրկ է. վարչութիւնը ամեն ջանք ի գործ կը դնէ թերութիւնները ուղղելու, մասնաւորապէս կերակուրի և դեղերու մատակարարութեան և առողջապահիկ միջոցներու անթերի գործադրութեան ուշադրութիւն կը տրվի, որովհետև ասոնց մէջ է բանակին գլխաւոր թշնամին: Պատերազմի առեն, կրուեն, թշնամւոյն դնդակներէն աւելի սոսկալի է հիւանդութիւնը. այս ճշմարիտ է մանաւանդ Կուբայի պատերազմին համար, ուր վատառողջ կլիմայ մը, արեգարձային տաքութիւն մը, դեղին տենդը կը սպառնան եանքի բանակին: Պատերազմի սկիզբէն շատեր կըսէին, թէ այս անգամ կարելի պիտի լինի չափով մը ստուգել թէ իրաւ դիմութիւնը կըրնայ աջող կերպով մաքառել անմոպաստ կլիմայի և հիւանդութեանց դէմ, թէ վերջերս զբաղված հականեխականները ոչքան օգտակար կըրնան լինել մարդոց խոշոր համախմբումներու մէջ և այլն: Այս պատճառաւ մեծ ջանք ի գործ կը դրվի բանակին առողջութիւնը ապահովելու: Պատերազմէն վերջ դիտութիւնը շատ մը նոր բաներ սորված պիտի դտնէ ինքզինք: Հիւանդութիւնը մինչև հիմա սպանիացիներէն աւելի ջարդ տուած է ամերիկացի նաւաստիներու. մինչև հիմա սպանվածներու թիւը այս կողմը 20-էն աւելի եղած չէ: Հայ կամաւոր մը կը գրէ, թէ շատեր կը մեռնին հիւանդութենէ, սակայն դաղտնի կը պահվի, մինչ պատերազմի մէջ մեռածներուն անունը, տարիքը, բնակութիւնը և այլն մանրամասնօրէն կը հրատարակվի: Կերևի թէ Սպանիայէն աւելի զարհուրելի թշնամի մ'ունինք:

Անցեալ ուրբաթ օր, 200-ի չափ նաւաստիներ ծովեղերքի մօտ դիրք մը գրաւեցին, այդ կողմերը գտնված բոլոր խրճիթները և տները կրակի տուին. բնակիչները բոլորը փախած էին արդէն, բայց կը վախցուէր թէ դեղին տենդի միջոցներ չեն կրցած փախուստ տալ անոնց հետ. ամոր համար կրակը, ամենէն լաւ հականեխականը, գործածութեան դրվեցաւ: Վերջին երկու-երեք օրերու պատերազմական լուրերը գլխաւորաբար այդ նաւաստիներու շուրջը կը դառնան: Կանթանամօ ամուր նաւահանգիստ մ'է Սանտ-Եագոէն 40 մղոն դէպի արևելք. Սամփսոն ուզեց այդ տեղը գրաւել իր նաւային գործողութեանց իբր հիմ գործածելու: Ցամաք հանված նաւաստիները սակայն շատ սիրալիր ընդունելութիւն չը գտան. անտառներու, թաւուտներու մէջ պահված սպանիացի կանոնաւոր զինուորներ և հրոսակներ կրակ սկսան տեղալ նորեկներու վրա. յամառ պատերազմ մը սկսած է այն օրէն ի վեր. պատերազմը սակայն անկանոն կռիւ մ'է, որուն մէջ թշնամիները զիրար չեն տեսներ, աւելի վառօդ կը վատնվի քան արիւն: Այս թեթև կռիւները սակայն մեծ ուշադրութեան արժանի են սա պատճառաւ, որ անոնք յայտնի ցոյց կուտան թէ՝ եթէ Սպանիան նախընտրել՝ կրնայ պատերազմը անպայման կերպով երկարել, ափ մը հրոսակներ Կուբայի խիտ անտառներու մէջ կրնան շաբաթներով զբաղեցնել իրենց թուոյն տասնապատիկը կանոնաւոր զինուորներ. երբեմն Կուբայի ապստամբներու այս առաւելութիւնը այսօր սպանիացոց կողմը կանցնի. Սամփսոնի կամ զօրավար Մայլզի թնդանօթները այս հրոսակներուն շատ քիչ սոսկում կրնան պատճառել: Այս իրողութիւնը աչքի առջև ունենալով լրագրերը կը թեղադրեն, որ կառավարութիւնը արևմուտքէն հնդիկներու կռիւներու վարժ որսորդներու գունդեր կազմակերպէ. այդ գունդերը կրնան հրոսակներու և անկանոն զօրքերու կռիւէն հասկնալ և անոնց պէս ծառէ ծառ, քարէ քար կրուելով յառաջ երթալ, առանց կանոնաւոր զինուորներու պէս ինքզինքնին վտանգելու: Պատերազմի հրատարակութեան առաջին օրերը պատերազմական մինիստրի քարտուղար Ռուզվելթ իր պաշտօնէն հրաժարելով՝ արևմուտքէն հեծելազօր գունդ մը կազմակերպեց 1000-էն աւելի նշանաւոր ձիաւոր որսորդներէ. այդ գունդը հիմա պատրաստ է Կուբա երթալու. կարծողներ կան, որ այդ գունդը իր թուոյն երեք չորս անգամը կանոնաւոր զինուորներէ աւելի լաւ գործ կրնայ տեսնել անկանոն զինուորներու դէմ, մանաւանդ, որ այդ գունդին մասնակցողները մեծ մասամբ նախկին հրոսակներ են: Այսօրվան թերթերը վախ կը յայտնեն, որ պատերազմը շատ երկարի. բայց որոշ է թէ ոչինչ կարելի է գիտնալ մինչև Սանտ-Եագոի առումը: Երկու-և-

րեք օրվն ամերիկեան բանակը ցամաք կելնէ, այն ատեն տեղի կունենայ այն դրաման, որուն կը սպասեն հանդիսատես ազգերը. թերևս Սանտեագօի առջև վճռվի Սպանիոյ բաղդը...

Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիացիների Պարսկաստանում ունեցած առևտրական աջողութիւնների մասին մի կերմանական լրագիր հետեւեալ կարևոր տեղեկութիւններն է հաղորդում. «Պարսկաստանում գոյութիւն ունեցող անգլիական բանկը մի քանի անդամ մանր ծառայութիւններ է մատուցել այժմեան Շահին, փոխ տալով նրան փոքր գումարներ: Նորերս Շահը պէտք ունէր 50 հազար լիրայի. նա դիմեց բանկին. վերջինս, կշռելով գործի հանգամանքը, համաձայնվեց փոխ տալ Շահին այդ գումարը այն պայմանով, որ իբրև ապահովութիւն, բանկին յանձնվի Բուշիր քաղաքի մաքսատունը: Եւ ահա այս տարվայ մայիս ամսից Պարսկաստանի այդ կարևոր մաքսատան կառավարութիւնը յանձնվեց Զերչիլ անգլիացուն: Այժմ, բացի Բուշիրից, անգլիացիների ձեռքն է անցել և Քիրման-Շահի մաքսատունը. անգլիացիները յոյս ունեն իրանց ձեռքը գցել շուտով նաև Շիրազի, Բենդէր-Աբբասի, Շատէլ Արաբի մաքսատները: Ինչպէս երևում է, նրանց դիտաւորութիւնն է Պարսկաստանի մաքսային ամբողջ կառավարութեանը տիրանալ:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

ՄԱԴՐԻԴ, 18 յունիսի: Աւգուստիի հեռագիրն ասում է, որ գրութիւնը շարունակում է ծանր լինել: 130 հազար ապստամբներից, 30 հազարն ունեն զէնքեր: Ագվինալդո առաջարկում է սպանիացիներին անձնատուր լինել, բայց Աւգուստի մերժեց այդ առաջարկութիւնը: Մինդանաօ, որ կազմում է Ֆիլիպինեան արշիպելագոսի մեծ մասը, նրա ընդհանուր նահանգապետն ասում է, թէ ապստամբները ի փախուստ դարձան, և թէ նրանց հրամանատար Արսէ, Ագվինալդօի նախկին ներկայացուցիչը, սպանված է: Ընդհանուր-նահանգապետը աւելացնում է, թէ իր ընդարձակ երկրի մէջ հանգստութիւն է տիրում:

ՄԱԴՐԻԴ, 18 յունիսի: Թագուհի-խնամակալուհին ստորագրեց հրովարտակ, որով թոյլ է տալիս անյապաղ կազմել Կաղիկսում մի օգնական զօրաբաժին 4 զինաւորված շոգենաւերից:

Աւուն կարծում է, թէ Կամարէի նաւատորմը ներկայումս անցնում է Սուէցի ջրանցքով:

Կուբայից հաղորդում են, որ Շաֆտէրի 300 զինուորներ հիւանդացան դեղին տենդով: Ամերիկական զօրքը յետ քաշվեց դէպի ծովափ, ուր բանակ է գցում՝ օգնական զօրքերին սպասելու համար:

Մանիլայից հեռագրում են, որ Աւգուստիի խնդիրքով, օտար պետութիւնների ծովակալները կը գումարվեն՝ գրութիւնը քննելու համար:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունիսի: Թագաւոր Կայսրը հրամայեց Վրաստանի թեմի երկրորդ յաջորդ սրբազան Վիսարիօնին լինել Իմէրէթիի եպիսկոպոս:

ՊԱՐԻԶ, 18 յունիսի: Բրիսսօն ներկայացրեց Ֆօրին նոր մինիստրութեան անդամներին: Ֆօր ստորագրեց հրովարտակ՝ մինիստրութեան կազմակերպութեան մասին:

ՏՕԲՕԼՍԿ, 18 յունիսի: Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը անցաւ դէպի Տիումէն:

ԽԷՐՍՕՆ, 18 յունիսի: Անգլին հրդեհը ոչնչացրեց քաղաքային մի շարք խանութներ:

ԲԵՐԼԻՆ, 18 յունիսի: Կրկնաքուէարկութիւնները վերջացան: Սօցիալ-դէմօկրատները տարան 8 տեղ, կենտրոնը—7, ազատ մտածող ժողովրդական կուսակցութիւնը—2. կորցրին՝ կայսերական կուսակցութիւնը—4, հակասեմիտները—2, հարաւ գերմանական ժողովրդական կուսակցութիւնը—4, լեհացիները—5. մնացած կուսակցութիւնները նախկին թիւն ունեն. բացի դրանից, առաջին անգամ հանդէս է գալիս գիւղատնտեսների դաշնակցութիւնը, որ ստացաւ 4 տեղ:

ԲԵԼԳՐԱԴ, 18 յունիսի: Թագաւորը ժամանեց Նիշ և, պատասխանելով քաղաքագլխի ողջունին, խիստ լեզուով պախարակեց սանձարձակ կուսակցական կրքերը: «Ամենից առաջ անհրաժեշտ է,—ասեց Թագաւորը, բարձրացնել ազգային բարօրութիւնը, հիմնաւորապէս ուղղել ֆինանսները, կատարելագործել զինուորական ոյժերը, և այդ պատճառով Միլան Թագաւորը յանձնառու զօրքի գլխաւոր հրամանատարութիւնը:»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում վաճառվում են «ՆՈՒԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» խորագրով հետեւեալ գրքերը:

ԱՆՏԱՌԱՊԱՀԸ, Սմիրնօվա, գինն է . 12 կ.
ԱՇԽԷՆՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏԸ, Ռօգօվա . 10 »
ԱՂՔԱՏԻ ԲԱԽՏԸ, Անդրէէվա . . . 5 »
ԳՈՀԱՐԻԿՆ ՈՒ ԱՍՏՂԻԿԸ, Աննենսկայա. 10 »
ՆԵԼԼՕՆ ԵՒ ՊԱՏՐԱՂԸ, ՈՒԻԴԱՑ . . 10 »
ԳԻՒՂՈՒՄ, Երգօլսկայա . . . . 20 »
2—6

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Ցնայլին գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՑԻՆ ՁԷԹ, սմբակները պնդացնելու-կակղացնելու և սնայնելու համար: Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման: ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.:

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, չեռում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չոխբլէտների, սանձերի, ձիի սարքի, էֆօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար: ԳԻՆԸ՝ 75 կոպ.:

ԹԱՄԲԱՑԻՆ ՍԱՊՕՆ (յատկապէս սպիտակ կաւուց չնոած թամբերի համար): Դարձ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և գունաւոր գոյների կաշի մաքրելու: ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.:

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում:

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:

(№ 76) 48—50

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ—10½—11½ ժ.: կանանց և երեխայոց հ., ծաղկի պատուաստումն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1½—2½ ժ. ներքին, և միզասեռական հ. ականջի, կոկորդի և քթի հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—6—7 ժ. ներքին և երեխայոց հ. նեարդային և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խաչորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիսի, արեան, կղմի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
132—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Ցնայլին կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՑԾԱԿ»: Մի քանի բօպէում նորոգում է հին, անչնորհ, խալվեցած կահկարասիքը, պիանինօ. բոյալներ, հայելի և ուրիշ շրջանակներ, արկղիկներ, տիպիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը: ԳԻՆԸ՝ 1 ր.:

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ—մինչև ոսքի կոշտերից (մօզոլներ), եղունգներից և կաշուէ այլ ուռոյցներից: «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, եղունգները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում: ԳԻՆԸ՝ 60 կ.:

Ծախվում է դեղարարական խանութներում: Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու:

48—50 (№ 76)

«Բեսարաբիայի ԲԵԼՑ քաղաքի զիւղերից մինում, մի հայ կալուածատիրոջ երկու երեխաներին գիմնազիայի առաջին և երկրորդ դասարանները պարապեցնելու համար՝ հարկաւոր է մի

ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ,

որը լաւ գիտենայ հայերէնի հետ՝ ռուսերէնը ազատ առոգանութեամբ, ֆրանսերէնն ու գերմաներէնը բոլորովին վարժ, ու դաշնամուրի վրա էլ կարողանայ նուագել գոնէ չափաւոր: Պայմանները շատ աջող են. բնակարան, ճաշ և լաւ ռոճիկ. առնուազն մի տարի մնալու պատասխանատուութեամբ: Պայմանների մանրամասնութիւնների մասին դիմել կամ г. ОРГѢЕВЪ (Бессарабія), священику Затикянцу և կամ г. БѢЛЬЦЫ (Бессарабія), Акопу Сергѣевичу Поповичу вотч. Еленовка. 9—10

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՑԻ ատենի մէջ նշանակված է ԱՃՈՒՐԴ 24-ին սոյն յունիսի, առանց կրկնաձրդի, կապալով տալու էջմիածնի տունը իր խանութներով, որ գտնվում է Պուշկինեան փողոցի վրա: Աճուրդին մասնակցողները պէտք է ներկայացնեն գրաւական. իսկ պայմանների մասին կարող են տեղեկանալ կօնսիստօրիայի դիւանատանը:

1—3 Անդամ կօնսիստօրիայի՝ Թադէոս վարդապետ

ԼՕՑՍ ՏԵՍԱՒ

ԼԷՕ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

(Պատմական վէպ 753 երես):

Գինը 1 բուբլի 30 կոպէկ: Դիմել հեղինակին. ТИФЛИСЪ, редакція „Մշակ".

Թիֆլիսում ծախվում է և Կենտրօնական գրավաճառանոցում: 8—10

ԽԱՐԿՕՎԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Մայիս ամսից սկսվեց խնդիրքների ընդունելութիւնը երկու սեռի անձինքներից: Դպրոցն ուսարաստող և ատամնաբոյժի դիպլոմն ստացող անձինք իրաւունք ունեն զբաղվել բժշկական պրակտիկայով իրանց մասնագիտութիւնից, իսկ պետական ծառայութիւն մտնելու ժամանակ իրաւունք ունեն 10-րդ կլասի ասիճանի՝ աւագութեամբ: Դպրոցի մանկավարժական խորհրդի նախագահ պրոֆէսսոր Պօպովի 25-ամեայ բժշկական և գիտական գործունէութիւնը յաւերժացնելու համար ձրի վականսիա է նշանակված մի ամենաաղքատ աշակերտուհու համար:

ԳԱՍԱԽՕՍՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԼԵԿՑԻՕՆՆԵՐԸ.

ԱՆԱՏՕՄԻԱ.—Խարկովի Կայս. համալսարանի էկստրա-օրդինար պրոֆէսսոր Ա. Կ. Բէլօուսով:
ՖԻԶԻՕԼՕԳԻԱ, գիստօլօգիա, և ընդհանուր պաթօլօգիա.—Խարկ. Կայս. համալ. օրդին. պրոֆ. Ա. Վ. Բէպրէվ:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐ ԹԻՐՈՒՐԳԻԱ.—Խարկ. Կայս. համ. օրդ. պրոֆ. Լ. Վ. Օբլօվ:
ՖԱՐՄԱԿՕԼՕԳԻԱ, ԲԷՅԷՊՈՒՐԱ և ընդհանուր ախրապիա.—Խարկ. Կայս. համալ. Օրդ. պրոֆ. (նա է և դպրոցի մանկավարժական խորհրդի նախագահ) Ս. Ա. Պօպով:
ՔԻՄԻԱ ԵՒ ՖԻԶԻԿԱ.—Խարկ. Կայս. համ. լաբորատ Ն. Ա. Ֆէդօրօվսկի:
ՊՐՕՏԷԶԵԱՆ ՏԷԽՆԻԿԱ.—Դպրոցի կառավարիչ բժշկապետ Ս. Ա. Նէմիրօվսկի:

Տեղեկութիւնների համար դիմել դպրոցի կառավարիչ բժշկապետ Նէմիրովսկուն, угол Московской улицы и Николаевской площади, домъ Штейфона. (п. չ.) 3—4

Ներսիսեան դպրոցի

բարձր դասարանի աշակերտ ուզում է տեղ ունենալ գրավաճառանոցներում, գրատներակներում և ուրիշ հաստատութիւններում: Հասցէն՝ Авлабаръ, Озеровская, А. Агабабяну. 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ
ԶԱԽԱՐԻԱԳԵԱՆ

ամառը ընդունում է հիւանդներ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՔԱՑԻՆ ՋՐԵՐՈՒՄ.
Հասցէն՝ Պետերբուրգ. ա. «Սեղանի լիստոկ»: 8—12

ԲԵՐԹԱՔ-ՐԻՍ
Քիմիա-կօսմետիական լաբորատորիա ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆ
ԿՕՍՄԷՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆ

ԷՕԺԷՆԻԱՑԻ ԳԱՍՏԱ
երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է չուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերում նաև երեսի թարմութիւն և դեղեցկութիւն: Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange
Մազերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ: Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ
սպիտակ, վարդագոյն և Բաչել (թուխ դէմք ունեցողների համար). նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անկասելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն: Գինը է 1 ր. 20 կ.—1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ
հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդային գոյն, որ ոչ ցերեկվայ, ոչ եղէքտրական լոյսից չէ փչանում: Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՑԻՆ ԲԱԼԶԱՄ
(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն: Նա ոչնչացնում է արևհարքը մունները, և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և ագեղութիւն: Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՑԵՐԻՆԱՑԻՆ
գլխի պօմադ Պէրուանական բալզամով եփած՝ մազեր պնդացնելու, խտացնելու և աճեցնելու համար: Գինը 2 ր.

ԽՈՒՆԶԱՑԻՆ ՊՕՄԱԴ
նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկութիւն: Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ
բեղերի համար (Ռիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման: Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ
(Ռիս-Գուտման), սև, շագանակագոյն և խարտեաշ: Այդ ներկով ներկված մազերը պահպանում են իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում: Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիական խանութներում: Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բագու: (п.) 39—50

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Іюня 1898 г.

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13